«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ N 10/2

ք. Երևան 16 ապրիլի 2026 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ԲԻԶՆԵՍ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ՄՇԱԿՎԱԾ «MINI MBA» ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թ. հունիսի 16-ի թիվ 51-Ն հրամանով հաստատված «Լրացուցիչ կրթության մոդուլային ծրագրերի երաշխավորման կարգի» 12-րդ կետի պահանջները, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 49-րդ կետի 19-րդ ենթակետով ու ԵՊՀ գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 19-րդ ենթակետով՝ ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. հաստատել ԵՊՀ «Բիզնես ինկուբատոր» կառուցվածքային ստորաբաժանման կողմից մշակված «Mini MBA» լրացուցիչ կրթության մոդուլային ծրագիրը՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
‘Երևանի պետական համալսարան’ հիմնադրամի գիտական խորհրդի
2026 թ. ապրիլի 16-ի թիվ 10/2 որոշման

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
«Բիզնես ինկուբատոր»

«Mini MBA»
լրացուցիչ կրթության մոդուլային ծրագիր

Երևան-2026

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«Mini MBA» լրացուցիչ կրթության մոդուլային ծրագիր

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ, ՈԼՈՐՏԸ

- Բիզնես ու կառավարում
- Տեխնոլոգիական կառավարում

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է ապահովել մասնակիցների մոտ կառավարման, բիզնես գործընթացների ու տեխնոլոգիական կառավարման գործնական գիտելիքների ու կիրառական հմտությունների ձևավորում, մասնավորապես՝

• զարգացնել ռազմավարական և համակարգային մտածողություն,
• ձևավորել տվյալահեն որոշումների կայացման կարողություններ (KPI, policy analysis),
• զարգացնել թվայնացման ու GovTech լուծումների կիրառման հմտություններ,
•աջակցել պետական ծառայողների վերապատրաստմանը (ոչ կառավարման մասնագիտություններով մասնագետների համար),
• զարգացնել առաջնորդություն ու միջգերատեսչական համագործակցություն:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

6 շաբաթ, 200 ժամ:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

Նպատակային խմբեր՝ ուսանողներ, մասնագետներ, պետական ծառայողներ:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

№	Թեմա	Բովանդակություն	Տեսական	Գործնական
1.	Ձեռնարկատիրական կառավարում	Ձեռնարկատիրության հիմունքներ, բիզնես գաղափարների մշակում ու կառավարման սկզբունքներ	8	8

2.	Ռազմավարական պլանավորում	Ռազմավարական վերլուծություն, նպատակադրում ու երկարաժամկետ պլանավորում	8	8
3.	Թվայնացում ու տեխնոլոգիական կառավարում	Թվային գործիքների կիրառում, բիզնես գործընթացների ավտոմատացում ու տեխնոլոգիական ռազմավարություն	8	8
4.	Քանակական ու տվյալահեն վերլուծություն	Տվյալների հավաքագրում, վերլուծություն ու որոշումների կայացում տվյալների հիման վրա	8	8
5.	Ֆինանսներ	Ֆինանսական կառավարման հիմունքներ, բյուջետավորում ու ներդրումային որոշումներ	8	8
6.	Մարքեթինգ ու հանրային հաղորդակցություն	Շուկայի վերլուծություն, բրենդավորում ու հաղորդակցման ռազմավարություններ	8	8
7.	Առաջնորդություն ու թիմային աշխատանք	Առաջնորդության ոճեր, թիմի կառավարում ու կազմակերպական վարքագիծ	8	8
8.	Գաղափարի ներկայացում	Pitching, հանրային ելույթ, գաղա-փարի հստակ ներկայացում ու ազդեցիկ հաղորդակցում	8	8
9.	Մենթորինգ	Անհատական խորհրդատվություն, բիզնես գաղափարների զարգացում ու ուղեկցում	72	
Ընդամենը			200	

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

- Լսարան (պրեզենտացիոն տեխնիկայով՝ projector, smart board):
- Համակարգիչներ ու համացանցի հասանելիություն:
- LMS հարթակ (Moodle/Google Classroom/այլ):
- Տեսազանգերի հարթակ (Zoom, MS Teams):
- Բիզնես սիմուլյացիոն ու վերլուծական ծրագրեր (Excel, Python, BI գործիքներ):
- Բիզնես ինկուբատորի աշխատանքային տարածք (coworking, mentoring rooms):

ԾՐԱԳՐԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ծրագիրը նպաստում է նաև պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ զարգացնելով տվյալահեն որոշումների կայացման, թվայնացման ու բիզնես կառավարման հմտությունները:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«Ձեռնարկատիրական կառավարում»

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

- ✓ Ձևավորել բիզնես գաղափարների մշակման համակարգված մոտեցում:
- ✓ Զարգացնել բիզնես մոդելների կառուցման հմտությունները:
- ✓ Ապահովել ձեռնարկատիրական որոշումների կայացում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ավարտին մասնակիցը պետք է կարողանա՝

- ✓ մշակել առնվազն 1 բիզնես գաղափար ու ներկայացնել այն,
- ✓ կազմել բիզնես պլանի մոդել,
- ✓ կատարել շուկայի նախնական վերլուծություն (նվազագույնը՝ 2 մրցակից),
- ✓ գնահատել բիզնես գաղափարի ռիսկերն ու հնարավորությունները:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- ✓ Ընթացիկ գնահատում (առաջադրանքներ) – 40%:
- ✓ Վերջնական նախագծային աշխատանք – 60%:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկատիրական կառավարման դասընթացը ներառում է բիզնես գաղափարների գեներացման ու գնահատման մեթոդներ, ինչպես նաև ձեռնարկատիրական մտածողության ձևավորում: Դասընթացի շրջանակում ուսումնասիրվում են առաջարկի ձևավորումն ու բիզնես մոդելների կառուցումը, մասնավորապես Business Model Canvas գործիքի կիրառմամբ: Քննարկվում են նաև շուկայի նախնական վերլուծության, ռիսկերի գնահատման ու բիզնես գաղափարի ներկայացման հիմնարար մոտեցումները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ

№	Թեմա	Բովանդակություն	Տեսական	Գործնական
1.	Ձեռնարկատիրության հիմունքներ ու բիզնես գաղափարների ձևավորում	Ձեռնարկատիրության էությունը, ձեռներեցի դերը, գաղափարների ստեղծման մեթոդներ, շուկայի կարիքների բացահայտում:	2	2
2.	Շուկայի վերլուծություն ու բիզնես մոդելավորում	Թիրախային շուկայի սահմանում, մրցակցության վերլուծություն, բիզնես մոդելի կառուցում:	2	2

3.	Բիզնես պլանավորում ու ռեսուրսների կառավարում	Ծախսերի ու եկամուտների պլանա-վորում, ֆինանսավորման աղբյուրներ, ռիսկերի գնահատում:	2	2
4.	Բիզնեսի զարգացում, կառավարում ու ներկայացում	Բիզնեսի աճի ռազմավարություններ, թիմի կառավարում, ներդրողների համար գաղափարի ներկայացում:	2	2

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԸ

- Դասախոսություններ
- Գործնական աշխատանքներ
- Խմբային քննարկումներ
- Բիզնես քեյսերի վերլուծություն
- Նախագծային ուսուցում

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Entrepreneurship: The Practice and Mindset Heidi M. Neck, Christopher P. Neck, Emma L. Murray, SAGE Publications, Nov 27, 2023.
- A New Entrepreneurial Dynamic: 21st Century Startups and Small Businesses-Gregory Autry, Richard G. Jones Jr.-2022.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«Ռազմավարական պլանավորում»

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

- ✓ Ուսանողներին զինել ժամանակակից ռազմավարական մտածողության, վերլուծական գործիքակազմի ու մրցակցային առավելության ձևավորման հմտություններով:
- ✓ Սովորեցնել ռազմավարական գործիքների կիրառություն (SWOT, PESTEL):
- ✓ Ապահովել գործողությունների պլանների մշակման կարողություն:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ավարտին սովորողը կկարողանա՝

- ✓ ներկայացնել ռազմավարական պլանավորման հիմնական մոդելներն ու մոտեցումները (օրինակ՝ SWOT, PESTEL, Porter's 5 Forces),
- ✓ բացատրել մրցակցային առավելության ձևավորման սկզբունքները,
- ✓ բնութագրել բիզնես միջավայրը՝ ներքին ու արտաքին գործոններով:
- ✓ մշակել կազմակերպության ռազմավարական պլան՝ հիմնված վերլուծության վրա:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ՝ 100 միավոր

- ✓ Ընթացիկ գնահատում (առաջադրանքներ) – 40%:
- ✓ Վերջնական նախագծային աշխատանք – 60%:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Ռազմավարական պլանավորում» դասընթացը, հիմք ընդունելով Մայքլ Փորթերի տեսությունները, բացահայտում է ռազմավարության էությունը, մրցակցային ուժերի վերլուծությունը, արժեքային շղթաների կառուցումը, դիրքավորման ռազմավարությունները, նորարարության դերը և գործողությունների համակարգային քարտեզագրումը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

№	Թեմա	Բովանդակություն	Տեսական	Գործնական
1.	Ի՞նչ է ռազմավարությունն ու ռազմավարական պլանավորումը, ներածություն	Ստեղծում է ռազմավարության հիմքերը՝ բացահայտելով տարբերությունը տեսլականի, առաքելության, նպատակների ու ռազմավարության միջև: Ձանազանվում են ռազմավարությունը օպերացիոն	2	2

		արդյունավետությունից և ներկայացվում ռազմավարական մտածողության կարևորությունը:		
2.	Պորտերի «Հինգ ուժերը»՝ մրցակցություն շահույթի համար	Վերլուծվում է Մայքլ Փորթերի «Հինգ ուժերի» մոդելը՝ շուկայի կառուցվածքի: Ուսանողները սովորում են բացահայտել սպառնալիքներ ու հնարավորություններ՝ հաշվի առնելով մատակարարների, հաճախորդների, շուկայում նոր խաղացողների, փոխարինողների ու մրցակիցների ազդեցությունները:	2	2
3.	Ռազմավարության մշակում ու նպատակների սահմանում	Ռազմավարական այլընտրանքների մշակում, SMART նպատակների ձևակերպում, մրցակցային ռազմավարությունների ընտրություն:	2	2
4.	Ռազմավարական պլանավորման գործնական քայլերը	Ներկայացվում է ռազմավարության մշակման փուլային մոտեցումը, ներառյալ միջավայրի վերլուծությունը, նպատակների ձևակերպումը, այլընտրանքների ընտրությունն ու իրականացումը: Քննարկվում են նաև իրականացման հիմնական գործիքներն ու խնդիրները:	2	2

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԸ

- Դասախոսություններ
- Գործնական աշխատանքներ
- Խմբային քննարկումներ
- Բիզնես քեյսերի վերլուծություն
- Նախագծային ուսուցում

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Michael E. Porter, What Is Strategy?
- Michael E. Porter, The Five Competitive Forces That Shape Strategy
- W. Chan Kim and Renee Mauborgne, Blue Ocean Strategy
- Mark W. Johnson, Clayton M. Christensen, Henning Kagermann, Reinventing Your Business Model

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«Թվայնացում ու տեխնոլոգիական կառավարում»

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

- ✓ Զարգացնել թվային և տեխնոլոգիական մտածողություն:
- ✓ Սովորեցնել բիզնես գործընթացների ավտոմատացման կիրառում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ավարտին սովորողը կկարողանա՝

- ✓ ընտրել անհրաժեշտ թվային գործիքներ:
- ✓ մշակել թվայնացման պլան:
- ✓ վերլուծել տեխնոլոգիական լուծումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ՝ 100 միավոր

- ✓ Ընթացիկ գնահատում (առաջադրանքներ) – 40%:
- ✓ Վերջնական նախագծային աշխատանք – 60%:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Թվայնացում ու տեխնոլոգիական կառավարում» դասընթացը ուսումնասիրում է կազմակերպությունների թվային փոխակերպման գործընթացներն ու տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը բիզնեսում: Բովանդակության մեջ ընդգրկված են թվային գործիքների օգտագործումը, տվյալների կառավարումը, ավտոմատացումն ու տեխնոլոգիական ռազմավարությունների մշակումն՝ կազմակերպության մրցունակությունն ու արդյունավետությունը բարձրացնելու համար:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

№	Թեմա	Բովանդակություն	Տեսական	Գործնական
1.	Թվայնացման հիմունքներ ու թվային փոխակերպում	Թվայնացման էությունը, թվային փոխակերպման փուլերը, կազմակերպության թվային ռազմավարության դերը:	2	2
2.	Թվային գործիքներ ու տեխնոլոգիաներ	Տվյալների կառավարման համակարգեր, ամպային տեխնոլոգիաներ, ավտոմատացման գործիքներ, բիզնես ծրագրային լուծումներ (ERP, CRM):	2	2
3.	Տվյալահեն կառավարում ու արհեստական բանականություն	Տվյալների հավաքագրում ու վերլուծություն, KPI-ների կիրառություն, AI գործիքների ներդրում կառավարման գործընթացներում:	2	2

4.	Տեխնոլոգիական ռազմավարություն և թվային ռիսկեր	Տեխնոլոգիական զարգացման պլանավորում, կիբեռանվտանգություն, թվային ռիսկերի գնահատում ու կառավարման մեխանիզմներ:	2	2

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԸ

- Դասախոսություններ
- Գործնական աշխատանքներ
- Խմբային քննարկումներ
- Բիզնես քեյսերի վերլուծություն
- Նախագծային ուսուցում

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Strategic Planning for Public and Nonprofit Organizations: A Guide to Strengthening and Sustaining Organizational Achievement (6th Edition) — John Bryson & Bert George, 2024.
- Strategic Planning A Complete Guide (2024 Edition) — Gerardus Blokdyk, 2024.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«Քանակական ու տվյալահեն վերլուծություն»

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

- ✓ Զարգացնել տվյալահեն մտածողություն:
- ✓ Սովորեցնել տվյալների վերլուծություն:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ավարտին սովորողը կկարողանա՝

- ✓ վերլուծել տվյալներ,
- ✓ կիրառել տվյալների վերլուծության գործիքները,
- ✓ կայացնել տվյալահեն որոշումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ՝ 100 միավոր

- ✓ Ընթացիկ գնահատում (առաջադրանքներ) – 40%:
- ✓ Վերջնական նախագծային աշխատանք – 60%:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Քանակական ու տվյալահեն վերլուծություն» դասընթացը կենտրոնանում է տվյալների հավաքման, մշակման ու վերլուծության մեթոդների վրա: Դասընթացի ընթացքում ուսանողները սովորում են կիրառել քանակական մոդելներ, տվյալների վիզուալիզացիա ու տվյալահեն մոտեցումներ՝ բիզնեսի ու կառավարման խնդիրների լուծման համար:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

№	Թեմա	Բովանդակություն	Տեսական	Գործնական
1.	Տվյալների հավաքագրում ու նախնական մշակում	Տվյալների աղբյուրներ, հավաքագրման մեթոդներ, տվյալների մաքրում ու կազմակերպում:	2	2
2.	Տվյալների կառավարում	Աղյուսակների ստեղծում, բանաձևեր ու ֆունկցիաներ, սորտավորում, ֆիլտրավորում ու տվյալների կազմակերպում:	2	2
3.	Տվյալների վերլուծության մեթոդներ	Վիճակագրական վերլուծություն, գրաֆիկ վերլուծություն, կանխատեսման մոդելներ ու տվյալահեն որոշումների ընդունում:	2	2
4.	Տվյալների վիզուալիզացիա	Դիագրամներ ու վիզուալ գործիքներ, տվյալների	2	2

		ներկայացում ու արդյունքների մեկնաբանում:		

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԸ

- Դասախոսություններ
- Գործնական աշխատանքներ
- Խմբային քննարկումներ
- Բիզնես քեյսերի վերլուծություն
- Նախագծային ուսուցում

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Applied Statistics in Business and Economics — David P. Doane և Lori E. Seward, 2024
- Applied Statistics and Multivariate Data Analysis for Business and Economics: A Modern Approach Using R, SPSS, Stata, and Excel — Springer, 2025

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«Ֆինանսներ»

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

- ✓ Սովորեցնել ֆինանսական կառավարման հիմունքներ:
- ✓ Զարգացնել բյուջետավորում իրականացնելու հմտությունները:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ավարտին սովորողը կկարողանա՝

- ✓ կազմել նախագծի բյուջե,
- ✓ հաշվել շահույթը,
- ✓ վերլուծել ներդրումների հնարավոր տարբերակները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ՝ 100 միավոր

- ✓ Ընթացիկ գնահատում (առաջադրանքներ) – 40%:
- ✓ Վերջնական նախագծային աշխատանք – 60%:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Ֆինանսներ» դասընթացը կենտրոնանում է կազմակերպությունների ֆինանսական կառավարման, հաշվառման և ներդրումների հիմնարար սկզբունքների վրա՝ ապահովելու ֆինանսական կայունություն և աճ: Դասընթացի ընթացքում ուսանողները ուսումնասիրում են բյուջետավորում, ֆինանսական վերլուծություն, ռիսկեր և ներդրումային որոշումների ընդունման մեթոդներ՝ տվյալահեն և արդյունավետ ֆինանսական ռազմավարություններ ձևավորելու համար:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

№	Թեմա	Բովանդակություն	Տեսական	Գործնական
1.	Ֆինանսների հիմունքներ	Ֆինանսների էությունը, ֆինանսական համակարգը, կազմակերպության ֆինանսական կառավարման հիմնական սկզբունքները:	2	2
2.	Ֆինանսական գործիքներ և շուկաներ	Արժեթղթեր (բաժնետոմսեր, պարտատոմսեր), բանկային և ներդրումային գործիքներ, ֆինանսական շուկաների կառուցվածք:	2	2
3.	Դրամական հոսքեր և ֆինանսական վերլուծություն	Cash flow-ի տեսակներ, ֆինանսական հաշվետվությունների	2	2

		վերլուծություն, եկամուտների և ծախսերի կառավարում:		
4.	Ներդրումների գնահատում և ROI	Ներդրումային որոշումների ընդունում, ROI-ի հաշվարկ, ռիսկի և եկամտաբերության գնահատում:	2	2

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԸ

- Դասախոսություններ
- Գործնական աշխատանքներ
- Խմբային քննարկումներ
- Բիզնես քեյսերի վերլուծություն
- Նախագծային ուսուցում

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Principles of Corporate Finance (14th Edition) — Richard A. Brealey, Stewart C. Myers, Franklin Allen, Alex Edmans — 2022.
- Financial Management: Principles & Applications (14th Edition) — Sheridan Titman, Arthur J. Keown, John D. Martin — 2023-24.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«Մարքեթինգ և հանրային հաղորդակցություն»

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

- ✓ Զարգացնել մարքեթինգային մտածողություն:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ավարտին սովորողը կկարողանա՝

- ✓ մշակել մարքեթինգային ռազմավարություն,
- ✓ կառուցել բրենդ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ՝ 100 միավոր

- ✓ Ընթացիկ գնահատում (առաջադրանքներ) – 40%:
- ✓ Վերջնական նախագծային աշխատանք – 60%:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Մարքեթինգ և հանրային հաղորդակցություն» դասընթացը ուսումնասիրում է շուկայի վերլուծության, սպառողների վարքագծի և ապրանքների/ծառայությունների արդյունավետ առաջխաղացման հիմնական սկզբունքները: Բովանդակության մեջ ընդգրկված են հաղորդակցման ռազմավարություններ, բրենդինգ, թվային մարքեթինգ ու հանրային կապերի գործիքներ՝ կազմակերպության իմիջի ձևավորման և թիրախային լսարանի հետ արդյունավետ փոխազդեցության համար:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

№	Թեմա	Բովանդակություն	Տեսական	Գործնական
1.	Մարքեթինգի և հանրային հաղորդակցության հիմունքներ	Մարքեթինգի էությունը, հանրային հաղորդակցության դերը, թիրախային լսարանի սահմանում:	2	2
2.	Շուկայի վերլուծություն և մարքեթինգային ռազմավարություն	Շուկայի ուսումնասիրություն, սեգմենտավորում, թիրախավորում, դիրքավորում, մրցակցության վերլուծություն:	2	2
3.	Մարքեթինգային գործիքներ (4P, բրենդինգ)	Մարքեթինգային մոտեցումներ (Product, Price, Place, Promotion), բրենդի ձևավորում և դիրքավորում:	2	2
4.	Թվային մարքեթինգ և հանրային կապեր (PR)	Սոցիալական մեդիա, կոնտենտ մարքեթինգ, թվային գործիքներ, հանրային կապերի ռազմավարություններ:	2	2

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԸ

- Դասախոսություններ
- Գործնական աշխատանքներ
- Խմբային քննարկումներ
- Բիզնես քեյսերի վերլուծություն
- Նախագծային ուսուցում

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Integrated Marketing Communications: Advertising, Public Relations, and More — Denise T. Ogden և James R. "Doc" Ogden, 2023.
- Public Sector Marketing Communications, Volume II: Traditional and Digital Perspectives — Ogechi Adeola, Kojo Kakra Twum և Paul Katuse, 2023.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«Առաջնորդություն ու թիմային աշխատանք»

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

- ✓ Զարգացնել առաջնորդության և թիմային աշխատանքի կիրառական հմտությունները, ինչպես նաև վերլուծական ու կառավարման կարողությունները:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ավարտին սովորողը կկարողանա՝

- ✓ կառավարել թիմային աշխատանքներ,
- ✓ կոնֆլիկտային իրավիճակներում ներկայացնել արդյունավետ լուծումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ՝ 100 միավոր

- ✓ Ընթացիկ գնահատում (առաջադրանքներ) – 40%:
- ✓ Վերջնական նախագծային աշխատանք – 60%:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Առաջնորդություն և թիմային աշխատանք» դասընթացը ուսումնասիրում է արդյունավետ ղեկավարության, թիմային համագործակցության հիմնարար սկզբունքները՝ նպատակ ունենալով բարելավել կազմակերպության արդյունավետությունը և աշխատակիցների ներգրավվածությունը: Բովանդակության մեջ ընդգրկված են առաջնորդության ոճերը, թիմային հաղորդակցությունը, խնդիրների լուծման մեթոդները և թիմի արդյունավետության գնահատման գործիքները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

№	Թեմա	Բովանդակություն	Տեսական	Գործնական
1.	Առաջնորդության հիմունքներ	Առաջնորդության էությունը, հիմնական ոճերը, որոշումների կայացում ու ազդեցության գործիքներ:	2	2
2.	Թիմային աշխատանք ու համագործակցություն	Թիմի ձևավորում, դերերի բաշխում, արդյունավետ հաղորդակցություն ու համագործակցության մեթոդներ:	2	2
3.	Մոտիվացիա ու կոնֆլիկտների կառավարում	Մոտիվացիայի տեսություններ, աշխատակիցների ներգրավում, կոնֆլիկտների տեսակներ ու լուծման ռազմավարություններ:	2	2
4.	Դեպքերի վերլուծություն ու գործնական կիրառություն	Իրական իրավիճակների ուսումնասիրություն, առաջնորդական որոշումների գնահատում, թիմային խնդիրների լուծման պրակտիկ մոտեցումներ:	2	2

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԸ

- Դասախոսություններ
- Գործնական աշխատանքներ
- Խմբային քննարկումներ
- Բիզնես քեյսերի վերլուծություն
- Նախագծային ուսուցում

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- How Teams Work: A Playbook for Distributing Leadership — Cathy Lassiter, Douglas Fisher, Toni Faddis, Nancy Frey — 2024.
- Leadership for Organizations (2nd Edition) — David A. Waldman & Charles A. O'Reilly — 2024.
- Radical Respect: How to Work with People You Disagree With and Build Stronger Teams — Kim Scott — 2023.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«Գաղափարների ներկայացում»

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

- ✓ Զարգացնել նախագծերի ներկայացման հմտությունները:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի ավարտին սովորողը կկարողանա՝

- ✓ իրականացնել նախագիծ՝ կիրառելով ոլորտային գործիքներ,
- ✓ կատարել վերլուծություն՝ կարողանալով կայացնել որոշումներ,
- ✓ ներկայացնել նախագիծը և պաշտպանել սեփական գաղափարները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ՝ 100 միավոր

- ✓ Ընթացիկ գնահատում (առաջադրանքներ) – 40%:
- ✓ Վերջնական նախագծային աշխատանք – 60%:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Գաղափարների ներկայացում» դասընթացը կենտրոնանում է ստեղծագործական ու բիզնես գաղափարների արդյունավետ ձևակերպման, կառուցման ու ներկայացման հմտությունների վրա: Բովանդակության մեջ ընդգրկված են գաղափարների կառուցվածքային ներկայացումը, լսարանի ներգրավումը, վիզուալ և խոսքային կոմունիկացիոն գործիքների օգտագործումը, ինչպես նաև storytelling տեխնիկաները՝ համոզիչ ու ազդեցիկ ներկայացում ապահովելու համար:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

№	Թեմա	Բովանդակություն	Տեսական	Գործնական
1	Պրեզենտացիայի հիմունքներ ու կառուցվածք	Արդյունավետ ներկայացման սկզբունքներ, պրեզենտացիայի կառուցվածք, հիմնական գաղափարի ձևակերպում:	2	2
2	Պատմողականություն (Storytelling) ու նախագծի պատմություն	Գաղափարի պատմության կառուցում, լսարանի հետ էմոցիոնալ կապի ստեղծում, համոզիչ ուղերձի ձևավորում:	2	2
3	Տեսողական գործիքներ ու վիզուալ հաղորդակցություն	Սահիկաշարերի պատրաստում, ինֆոգրաֆիկներ, գրաֆիկներ ու դիզայնի սկզբունքներ՝ գաղափարների հստակ ներկայացման համար:	2	2
4	Հրապարակային ելույթ ու pitching	Խոսքի հմտություններ, մարմնի լեզու, լսարանի ներգրավում, նախագծի		

		ներկայացում ներդրողների կամ լսարանի առջև:		

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԸ

- Դասախոսություններ
- Գործնական աշխատանքներ
- Խմբային քննարկումներ
- Բիզնես քեյսերի վերլուծություն
- Նախագծային ուսուցում

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Powerful Presentations: Selling Your Story on Stage or In The Boardroom — Stephen Haunts, 2022.
- Win Every Argument: The Art of Debating, Persuading, and Public Speaking — Mehdi Hasan, 2023.
- Impact Presenting: A Confident Presenter's Guide Eric E. Molin, 2023.